# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 դեկտեմբերի 2020 թվականի N 289 - Ա**

**ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ «ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊՐԱՖԻԼԱՎՈՐՎԱԾ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով առողջապահության նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 3767-Լ հրամանը և «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի գրությունը.

**ո ր ո շ ու մ ե մ.**

1.Հաստատել՝ նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) անհրաժեշտությամբ պայմանավորված «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերապրոֆիլավորված բաժանմունքի ժամանակավոր հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2020 թվականի հոկտեմբերի 26-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

21.12.2020

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ. դեկտեմբեի 21
ք. Կապան